

«ԱՆԱՀԻՏ» ՀԱՆԴԵՍԸ ԼԵՂՎԻ ԵՎ ՈՃԻ ՄԱՍԻՆ

ՃՈՒ. Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Արշակ Չոպանյանի խմբագրած «Անահիտ» հանդեսի հրատարակության առաջին շրջանը՝ 1898—1911 թթ. (երկրորդը՝ 1929—1949) համընկնում է արևմտահայ աշխարհաբար լեզվի նորմավորման ու հաստատման շրջափուլին, նրա գեղարվեստական մշակման ու կատարելագործման ընթացքին: Մտահոգ գրական արևմտահայերենի զարգացմամբ՝ «Անահիտը» զգալի նպաստ ունեցավ այդ գործում: Այս իմաստով էլ կարևոր է ճշտել ազգային առաջադիմական այդ հանդեսի դիրքորոշումը լեզվաոճական խնդիրների, մասնավորապես արևմտահայ գրական լեզվի զարգացման ուղիների վերաբերյալ:

Լեզվական խնդիրների քննությունը «Անահիտում» ելակետ ունի հանդեսի գործունեության ընդհանուր գաղափարական սկզբունքները. նպաստել ազգային-քաղաքական անկախ գոյության հաստատմանը և մշակութային վերածննդի գործին:

Ազգային ինքնություն գոյության հաստատման համար անպայման է համաշխարհային կուլտուրային տվյալ ժողովրդի հոգևոր տրվածքը, մշակութային ինքնօրինակությունը: «Անահիտի» ազգային ծրագրին հատուկ այս տրամաբանությունը լեզուն դիտում է ամենարճորոշ հայտանշան ժողովրդի հոգևոր անկախության ու ինքնատիպության, հետևաբար և՛ մեծագույն ազդակ ֆիզիկական գոյության: Ու որքան մշակված, հարուստ, ինքնատիպ և ուժեղ, որքան ավելի կենդանի է լեզուն, այնքան քացահայտ է նրա ժողովրդի հոգևոր անկախությունը, անվիճելի՝ գոյության իրավունքը: Այդ մասին շատ հստակ ու որոշակի է ձևակերպվում «Անահիտում». «... Ազգային» տեսակետով, ոչինչ արեւի արծեք ունի մեզի համար քան մեր լեզուն, մեր ցեղային ինքնութիւնը մարդկութեան մէջ մշտնջենաւորող մեծագոյն սատարը եւ որուն ոգոյն անվթար պահպանման ու կազմուածքին տրամաբանական եւ ուշիմ զարգացմանը նպաստելու ոեւէ ջանք «ազգային գործ»ին համար աշխատելու կը համապատասխանէ նորեւն»¹:

Հայոց լեզվի ու հայ ժողովրդի պարագային, քննվող ժամանակաշրջանում, լեզվի ազգապահպան ու հասարակական նշանակությունը ընդգծվում էր հասկանալի պատմական ու քաղաքական պատճառներով, լեզվի զրգացմանն ուղղված յուրաքանչյուր ձեռնարկ նշկատվում հայրենասիրական դրսևորում, ազգանվեր գործ: Լեզուն դիտվում է ազգային գոյության ձև:

Այս ըմբռնմամբ է, որ հայ ժողովրդի արևմտահայ և արևելահայ հատվածների հոգևոր մերձեցման հարցում հանդեսը քացառիկ կարևոր դեր է հատկացնում լեզվական գործունին: (Նույնիսկ փորձ է արվում մշակել հատուկ կանոններ՝ երկու «քարթառներն» իրար մերձեցնելու համար, ինչպես օր.՝ ներգոյական «ուս» ձևի ներմուծումը արևմտահայերեն (Պոլսում, Իզմիրում, Պերլինում, Փարիզում, Ան., 1903, էջ 86, 105), որը սակայն ընդունելություն չգտավ):

Լեզվի ընդհանուր կառուցվածքում «Անահիտն» առանձնացնում է երկու կողմ՝ այսպես կոչված ողնաշարը և մարմինը: Առաջինը լեզվի տևական, կայուն, համեմատաբար անփոփոխ մասն է (քերականական կառուցվածքը), երկրորդը՝ մշտական անմասն, փոփոխման ենթակա մասը (քառասյառը): Եթե առաջինն ապահովում է լեզվի ամրությունը, ընդհանուր միությունը, սահմանվում տևական օրենքների ձևով, ապա երկրորդը հիմնական խթանն է լեզվի արագ բնաշրջության ու զարգացման: Հարկ է միայն ընդհանուր սահմանները գծել այդ զարգացման, մնացյալը, ինչ որ խորթ է ու անհաշտ իր ոգուն, լեզուն ժամանակի ընթացքում մի կողմ կենտի:

Այսպիսով, լեզուն չի դիտվում անշարժ, անփոփոխ տրված մի քան, «թուաքանական

¹ «Անահիտ», Փարիզ, 1903, էջ 81: Այսուհետև հանդեսի տարբերիվը և էջը տրվելու են բնագրում:

խնդիր», որ մեկ հարվածով լուծվելիք միայն մեկ պատասխան ունի: «... Լեզու մը բարձր էակ մըն է, որ մշտնջենական լինելութեան մը մէջ, յաիտենաբար կը կազմուի միշտ փոփոխուելով...» (Ա. տ., էջ 102):

Արտահայտված կարծիքներում դժվար չէ նկատել պատմական մոտեցում հարցին: Դա առավել որոշակի է երևում, երբ հանդեսում քննվում են հայոց լեզվի պատմության, նրա զարգացման այս կամ այն շրջափուլին առնչվող խնդիրներ: Ի դեպ, դրանք, որոշ վիճելի հարցադրումներով, քննություն են բռնում այսօրվա գիտականորեն մշակված տեսակետների կողքին:

«Անահիտում» մի շարք փաստարկներով պաշտպանվում է այն տեսակետը, ըստ որի, հայերենը, ինչպես ամեն մի լեզու, պետք է ունեցած լինի իր քնիկ հիմքը, որը հարստացալով այլ լեզուներից փոխառված տարրերով, «զանոնք իր ուրոյն հոգւոյն մէջ համաձայնեցնելով», մշակելով ու կերպարանափոխելով» հասել է այն քազմատարր, ներդաշնակ ու ինքնատիպ լեզվին, որ է ոսկեդարյան հայերենը (տե՛ս, 1908, էջ 148—150):

Առաջ է քաշվում և պաշտպանվում այն կարծիքը, որ աշխարհաբարի տարրերը սկսել են ձեւավորվել դեռ 13—14-րդ դարերում, ապա փոխանցվել հետագա դարերին՝ հարստացալով լեզվական նոր իրողություններով: Իսկ նոր լեզվի կազմավորման կարևորագույն շրջանը համարվում է 19-րդ դարի կեսերը: Անդրադառնալով մոտ անցյալում աշխարհաբարի հաստատման համար մղվող պայքարին՝ հանդեսը միանշանակ կերպով պաշտպանում է աշխարհաբարի իրավունքը: Գրաբարը մեծավայելուչ է ու պարզ, կանոնավոր ու վճիտ, ազատ ու անկախ է, «զօրեղ Հայութեան մը գոյութիւնն ու հանդարտ ուժն ունի»: Սակայն, որքան էլ ճոխ ու մշակված, այն իր դերը վաղուց կատարել է («իր դերը կատարած, աւարտած ու մեռած է շատոնց» իբրև գրական գործիք), և «միակ լեզուն գոր պետք էր գործածել տարամերժօրէն, ամէն պարագայի մէջ եւ ամէն նիւթի համար, աշխարհաբարն էր,— որ արդէն չուշացաւ իր դատը քացարձակ յաղթանակով մը վաստկելու» (Ա. տ., էջ 148):

Արևելահայ աշխարհաբարի հաղթանակի գործում հանդեսը մեծ դեր է հատկացնում Մ. Նալբանդյանին, Ստ. Նազարյանին, Խ. Արուսեանին և այլոց: Իսկ արևմտահայ հատվածում՝ Ն. Ջորայանին, Գր. Օտյանին, Ստ. Ոսկանյանին, Հ. Սվաճյանին և ուրիշների: Ըստ որում, դիտվում է, որ արևմտահայ հատվածում հաղթանակը փոքր-իճ ուշացավ, որովհետև արևելահայերենում Արուսեանն առաջին հարվածից հաղթանակ տարավ՝ իր գործը կատարելով գրական հրաշակերտով: Իսկ մյուս հատվածում ծայր առան վեճերը, և աշխարհաբար կենդանի գրականությունը հետո եկավ (տե՛ս, 1898, էջ 5):

Այս բնորոշումներին երևում է, որ հանդեսը գրական լեզվի հաղթանակը անպայման կապի մեջ է տեսնում գրականության հետ, ըստ որի՝ ճշմարիտ, կենդանի գրականությունն է վկայությունը լեզվական հաղթանակի: Մյուս կողմից, թվում է, հակասություն է ստեղծվում այլ առիթով հանդեսում արտահայտված մեկ այլ մտքի հետ: Արուսեանին հատկացնելով արժանվույն տեղ (Արուսեանն առաջինն էր, որ «խոստած լեզուով» շարադրեց «գլուխ-գործոց մը»)՝ միաժամանակ ասվում է, որ արևելահայ աշխարհաբարի հաստատման ու վերջնական հաջողման հեղինակը ինքը՝ Նազարյանն է, նա է, «որ կոռած է վճռական կոիրը աշխարհաբարին համար եւ վերջնական յաղթանակը տարած է» (1902, էջ 2): Իրականում այստեղ ոչ մի հակասություն էլ չկա: Ուղղակի տարբեր են հարցի մոտեցման կերպերը. մի դեպքում խոսքը նոր լեզվի գեղարվեստական քարձարծեք կիրարկման մասին է, մյուս դեպքում՝ գաղափարական-տեսական խնդիրն է ուշադրության կենտրոնում:

«Անահիտում» լուրջ քննության առարկա են դառնում հայոց լեզվի զարգացման ժամանակակից շրջանի խնդիրները, որոնց շուրջը բացված բանավեճին («Արդի հայերենը») սասանակցում են Ա. Չոպանյանը, Գ. Ճնտգյանը, Գր. Վանցյանը, Ա. Մելեն և ուրիշներ:

Որ աշխարհաբարն անվերապահորեն հաստատել է իր իրավունքները, դարձել իշխող գրական լեզու, սա Չոպանյանը համարում է այլևս վեճ չընդունող ճշմարտություն: Ավելին, նա սկզբունքորեն մերժում է ամեն մի փորձ, որ միտում է գրական ասպարեզ դուրս բերել գրաբարախառն աշխարհաբարը. «... մեր արդի գրականութեան համար պէտք է գործածել միմիայն աշխարհաբարը, եւ զուտ աշխարհաբարը...» (Ա. տ., էջ 93): Այսպիսին է Չոպանյանի մոտեցումը: Թեև պետք է ասել, որ նա հստակորեն չի սահմանազատում, իսկ երբեմն էլ ուղղակի նույնացնում է գրական լեզու և գրականության լեզու ըմբռնումները, չեն դիտարկվում գրական լեզվի մյուս տարբերակները կամ ոճերը: Գրական լեզուն նախ և առաջ ըմբռնվում է իբրև գրականության լեզու: Բայց դա չի խանգարել շատ դիպուկ և հստակ ձևակերպումներ տալու արևմտահայ գրական աշխարհաբարի զարգացման խնդիրներին:

Լեզվի հասարակական ու պատմական բնույթի ընդգծմանը զուգահեռ՝ հանդեսի տեսական դրույքներում առանձնակի շեշտվում է նաև նրա գեղագիտական կողմը: Ըստ այդ ըմբռման, լեզուն ինքնին գեղագիտական արժեք է և զուտ գեղեցիկ տեսանկյունից ու

չափանիշներով գնահատվող ռեալություն: Ըկունությունը, պարզությունը, հստակ ու հղկված
նկարագիրը, հեշտընկալ ու դյուրիմաց կերպը նրա բնութագրական հատկանիշներն են:

Հիմնական լեզուական խնդիրը, որ այս մոտեցմամբ «Անահիտում» մշակվում է հետե-
վողականորեն, լեզվի գեղարվեստականության խնդիրն է: Դա, անշուշտ, չի սահմանափակ-
վում լեզվի սուսկ մշակվածությամբ, հղկված ու գեղեցիկ ոճի ստեղծմամբ: Լեզվի գեղար-
վեստականությունը անպայմանորեն ենթադրում է նախ և առաջ լեզվի բարձր ժողովրդայ-
նություն, ազգային ոգու, ազգային նկարագրի ընդգծում և ապա, իհարկե, զուտ «գեղեց-
կագիտական» չափանիշների ապահովում:

Ուրիշ խոսքով, լեզվի հարցում նույնպես ազգայինն ու գեղագիտականը հանդեսը դի-
տում է անբաժանելի միասնության մեջ:

Չնայած անհատի դերի որոշ չափազանցված գնահատումներին՝ հանդեսում շեշտվում
է այն միտքը, որ վերջին հաշվով լեզվի ստեղծողն ու կրողը ժողովուրդն է, և անհատի
ազատությունը ենթակա է ժողովրդական կենդանի խոսքի ու տվյալ գրական լեզվի հի-
մունքը կազմող բարբառի օրենքներին ու օրինաչափություններին: Հետաքրքրական է հե-
տևյալ փաստը. առանձին բառերի թեքված ձևերում ի և ու ձայնավորների պահպանումը
(շարժումի, ժողովուրդի, ճիտի, բծի, փուշի և այլն) հատուկ է Պոլսի բարբառին, սակայն
դեմ է գրաբարի կանոններին: Հատուկ ընդգծելով այդ փաստը՝ «Անահիտը» դա նկատում
է աշխարհաբարի ամենաբնորոշ քերականական հատկանիշներից մեկը: Նույն պահին զար-
գացվում է այն միտքը, որ լեզուն կենդանի է, ուժեղ և ինքնատիպ հենց այդ տարբերու-
թյունների մեջ. «Նոր լեզուներում կեանքի իրաւունք տուողը, զիրենք իրենց մայր լեզուն
զատողը, իրենց գլխաւոր ինքնատուրիւնը կազմողը, իրենց «բարբարոսութիւններն» են,
եթէ աշխարհաբարին գրաբարի դէմ մեղանշումները ջնջենք, աշխարհաբարը գոյութիւն ու-
նենալու իրավունքէն կը դադրի. որքան աւելի գանձուք շեշտենք, այնքան աւելի աշխար-
հաբարին ինքնուրոյն ոգին եւ ուժը բազմապատկած կըլլանք» (Ա. տ., էջ 95):

Նույն չափանիշներով են գնահատվում նաև գրաբարյան նախդիրների, հոգնակերտ ք-ի
գործածությունները, քերականական առանձին կառույցների, ինչպես նաև բառապաշարի
հարցերը:

Վերջին դեպքում հատկապես հանդեսը խիստ հետևողական է, լինի դա հին, մոռաց-
ված գրաբարյան բառերի, բարբառային ձևերի օգտագործում, թե փոխառություն օտար
լեզուներից: Սկզբունքն այն է, որ թուր բառերն էլ գործածելի են, եթե խորթ չեն արդի
աշխարհաբարի լեզվական ըմբռնողությանը: Թեև նախամեծար են համարվում խոսակցա-
կան լեզվում պահպանվածները և զուտ ռամկական ու գավառական բառերը, քանի որ
դրանք «աւելի կեանք կը պարունակեն, աւելի յստակ ու արագ, յետեւաբար եւ աւելի գե-
ղեցիկ կերպով կ'արտահայտեն մտածումը»:

Հանդեսն իր որոշարկված վերաբերմունքն ունի փոխառությունների նկատմամբ: Վեր-
ջիններս դիտվում են լեզվի հարստացման կարևորագույն աղբյուրներից մեկը: Լեզուն իր
դուները օտար բառերի առջև գոց չպետք է պահի, եթե դրանք անհարազատ չեն ու չեն
խաթարում նրա ինքնությունը, ազգային հիմունքը: Սա ընդունելով իբրև ելակետ՝ հանդեսն
ավելացնում է նաև, որ օտար լեզուներից փոխառված բառերը հարկ է, որ միշտ համա-
պատասխանեն «պէտքի մը» և յուրացվեն փոխառյալ լեզվի կոմիք: Որքանով որ՝ «լեզու
մը երբեք իր ինքնութիւնը չի կորսնցներ՝ բարձրագոյն զարգացում ունեցող լեզուի մը
գեղեցկագիտական առաւելութիւնները իւրացնելով, երբ գիտէ իր փոխառածը իր նկարա-
գրին համաձայնեցնել, զայն իր ուրոյն կնիքովը դրոշմել...» (Ա. տ., էջ 99):

Այսպիսով, «Անահիտը» տեսականորեն ընդհանրացնում և հստակ ձևակերպում է իր
ըմբռնումները գրաբարի, բարբառների, ժամանակակից փոխառությունների և արդի հա-
յերենի փոխհարաբերությունների մասին:

Լեզվի գեղարվեստականացման խնդիրը, ինչպես ասվեց, չի դիտվում գեղարվեստական
գրականության զարգացման ընթացքից դուրս: Այս հիմքի վրա զարգացվում է ուշագրաւ
հայացք լեզվի կարևորագույն հատկանիշներից մեկի՝ լեզուն իբրև բարձր գրականության
ստեղծման գործիք (և առհասարակ, ազգային կոլտուրայի մշակման ու զարգացման կա-
բլուր գործոն) դարձնելու վերաբերյալ: «Հող՝ արդէն լեզուի խնդրէն դուրս կ'ելլենք, ոճի
գրական արուեստի ոլորտը կը մտնենք» (Ա. տ., էջ 97): Իբրև շարունակություն այս մտքի,
լեզուն դիտվում է «ոճին նիթելներ», իսկ նրա բնականոն զարգացումը՝ ոճի մշակման,
կատարելագործման անպայման պահանջ (տե՛ս, 1899, էջ 180): Իր հերթին լեզվի գեղար-
վեստականացումը անվիճելիորեն կապվում է ոճի զարգացման հետ, գրողի անհատական
ոճի մշակման, հարստացման հետ. «առանց ոճի մշակման, առանց «գեղեցկագիտական
ձգտումներու», լեզու մը չի կրնար զարգանալ եւ ատոր համար է որ լեզուի մը զարգա-
ցումը կը կատարուի աւելի գրագէտներու քան քերականագէտներու ձեռքով» (1902, էջ 97):

Ոճը, ըստ հանդեսի, գրելու արվեստն է և իբրև այդպիսին անհատական երևույթ է,
շատ քանով կախված է հենց իր՝ գրողի մտությունից, ստեղծագործական վարպետու-

թյունից, յուրացրած գրական ազդեցություններից, այն կարողությունից, որով նա օգտվում է լեզվի ընձեռած հնարավորություններից: Իսկ հայերենը այդպիսի հնարավորություններ լայնորեն բացում է գրական օգտագործման համար:

Այս բնորոշումներում ըստ էության տրվում են ոճի ամենատիպական հատկանիշներից գունե մի քանիսը: Այն է. ոճը լեզվի կիրառման, օգտագործման կատեգորիա է: Հետևաբար, ոճն ըմբռնվում է իբրև ռեալություն, այնպես, ինչպես լեզուն: Սրանից էլ հետևում է, որ նրան նույնպես հատուկ է պատմականության սկզբունքը: (Խոսելով Հ. Սվաճյանի լեզվի և ոճի մասին՝ հանդեսը շատ հստակ ընդգծում է այն միտքը, որ այդ ոճի հրապարակախոսականությունը թելադրվում էր նաև պատմական իրականությամբ, ժամանակով: Նույն դիրքերից են գնահատվում 80-ականների Արփիարյանի սերնդի՝ հասարակական օգտակարության միտող գրվածքների ոճի խնդիրները): Եվ վերջապես, ոճը խորապես անհատական երևույթ է, կախված է գրողի ճաշակից, հմտությունից, կարողությունից, որ ոչ միայն տաղանդի, այլև գրական ու լեզվական դաստիարակության հարց է: Այս առումով հանդեսը բացառիկ տեղ է հատկացնում անցյալի գրական ժառանգության յուրացմանը՝ և իհարկե, թարգմանություններին:

«Անահիտը» բազմաթիվ առիթներով անդրադառնում է թե հին ու նոր շրջանի հայ գրողների, և թե՛ օտար հեղինակների լեզվի ու ոճի հարցերին, տալիս դիպուկ բնութագրումներ, որ արժեքավոր են նաև գիտական տեսանկյունից: Առհասարակ, «Անահիտը» ժամանակի այն պարբերականն է, որ լեզվի ու ոճի հարցերը մշտապես ունեցել է ուշադրության կենտրոնում: Հանդեսի քննադատությունը մեծարժեք գրականություն չի տեսնում այնտեղ, որտեղ հարուստ գաղափարական քվանդակության հետ չկա հղկված, մշակված, բարձր ոճ, չկա գեղարվեստականություն նաև զուտ լեզվական առումով:

Ю. С. АВETИСЯН—Журнал «Анаит» о языке и стиле.—Первый период издаваемого Аршаком Чопаняном журнала «Анаит» (1898—1911 гг.) совпадает с этапом становления и нормирования западноармянского литературного языка, с процессом его художественной обработки и совершенствования. Озабоченный развитием западноармянского литературного языка, журнал внес значительный вклад в это дело. В этом аспекте важно уточнить позицию прогрессивного национального журнала по отношению к исследуемому в статье вопросу.